# ԼՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

...կան թերթ

26 օգոստոսի, 1995 թ., շաբաթ, N146 (177)


ԼՐԱՏՈՒ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԼՂՀ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Օգոստոսի 25-ին ԼՂՀ խորհրդարանի քարտուղար Էմմա Գաբրիելյանն ընդունեց Լոնդոնի համալսարանի դասախոս, սոցիոլոգ Հրաչ Չիլինգարյանին: Հյուրը հետաքրքրվեց անկախ հանրապետության կյանքով, պետական կառույցվածքների, մասնավորապես ԼՂՀ խորհրդարանի գործունեությամբ:

Էմմա Գաբրիելյանը պատմեց ԼՂՀ խորհրդարանի աշխատանքի, խնդիրների ու նպատակների մասին: Իր հերթին Հրաչ Չիլինգարյանը նշեց, որ ինքն աշխատում է «Ղարաբաղյան պատերազմի հետևանքները» թեմայով դոկտորական դիսերտացիայի վրա և անհրաժեշտ նյութեր ստանալու նպատակով է ժամանել Լեռնային Ղարաբաղ:

*Գայանե ԱՌՍՏԱՄՅԱՆ*
*ԼՂՀ խորհրդարանի մամուլի քարտուղար*

...ցին հաղորդեց ԼՂՀ գյուղատնտեսության եւ պարենի նախարար Գրիգորի Գասպարյանը: 1 կգ հացահատիկը վաճառվել է 55 դրամով:

Եվս 500 տ պարենային հացահատիկ վաճառվել է հացի արտադրությամբ զբաղվող Հայաստանի տարբեր այլ կազմակերպություններին:

## ՀԵՌՈՒ ՉԷ ԱՇՆԱՆԱՑԱՆԸ

Մարտունու շրջանի Աշան գյուղի տնտեսության երկրագործները, այս տարի ամբարել են 345 տոննա ցորեն ու գարի: 60 տոննա հացահատիկ տնտեսությունը վաճառել է պետությանը:

Աշանցիները եռանդով լծվել են 95-ի աշնանացանի նախապատրաստական աշխատանքներին: Մեխանիզատորներ Արմո Ավագյանը, Վլադիկ Մովսիսյանը և Սամվել Գրիգորյանը 210 հեկտարի վրա ամռան հերկ են կատարել: Աշնանացանը կազմ ու պատրաստ սկսելու համար կորգվում ու կարգի է բերվում գյուղատեխնիկան: Վեռանորոգվեւ...

## «Հեզբոլահի» երեք գրոհայիններ սպանվել են Լիբանանի հարավում

«Հեզբոլահ» իրանամետ խմբավորման երեք գրոհայիններ սպանվել են հինգշաբթի օրը իսրայելական պահակախմբի հետ զինված ընդհարման հետեւանքով: Ինչպես օգոստոսի 25-ին հայտարարել է Իսրայելի պաշտպանության նախարարության ներկայացուցիչը, փոխհրաձգությունը տեղի է ունեցել Լիբանանի հարավում գտնվող «անվտանգության գոտու» հյուսիսային մասում:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցի հաղորդման համաձայն, բախման ընթացքում վիրավորվել է իսրայելցի մեկ զինծառայող:

## Եթովպիայի խորհրդարանը հաստատել է նոր կաբինետի կազմը

Եթովպիայի խորհրդարանը հաստատել է Եթովպիայի Դաշնակցային Ժողովրդավարական Հանրապետության վարչապետ Մելես Զենաուի առաջարկած նախարարների նոր կաբինետի կազմը: Ըստ Աբեբաից ԻՏԱՌ-...

## ՌԴ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

Չի բացառվում, որ եկող շաբաթ կկայանա ՌԴ անվտանգության խորհրդի նիստը: Դրա անցկացման կոնկրետ օրը կախված կլինի Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի որոշումից, ինչպես նաեւ օգոստոսի 24-ին Գրոզնի մեկնած Ռուսաստանի Դաշնության անվտանգության խորհրդի հատուկ աշխատանքային հանձնաժողովի գործունեության արդյունքներից: Այս մասին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հաղորդել է պետության ղեկավարի մամլո քարտուղարը: Հատուկ աշխատանքային հանձնաժողովը, որը ՌԴ նախագահի որոշման համաձայն կգլխավորի նիստի նախապատրաստմամբ, կգլխավորի խորհրդի նախագահ Օլեգ Լոբովը:

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԽՈՒՄԲԸ ՄԿՍԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հինգշաբթի երեկոյան Չեչնիա ժամանած Ռուսաստանի...

ՌԴ համապետական մարմինների գործադիր իշխանության գործունեությանը:

## ԳՆԴԱԿՈԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Չեչնիայում ՌԴ համապետական ուժերի միացյալ խմբավորումը չորեքշաբթի գիշերը ինն անգամ գնդակոծության է ենթարկվել, որից ութը գրանցվել է Գրոզնիում: Զոհեր չկան: Հատուկ նշանակության միլիցիայի ջոկատների երեք մարտիկներ վիրավորվել են: Այս մասին օգոստոսի 24-ին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ին Գրոզնուց հեռախոսով հաղորդել է համապետական հրամանատարության մամլո կենտրոնի ներկայացուցիչ Վասիլի Պանչենկովը:

## ԷՆԵՐԳԵՏԻԿՆԵՐԸ ԴԱՐՁՅԱԼ ՀԱՑԱԴՈՒԼ ԵՆ ՄԿՍԵԼ

Ամուրի Կոմսոմոլսկի խոշորագույն ջերմաէլեկտրակենտրոնի 12 աշխատողներ չորեքշաբթի օրը անժամկետ հացադուլ են հայտարարել ի նշան բողոքի աշխատավարձի բազմամսյա ձգձգումների դեմ: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակ...